(Նoսրագիր C.)

տէր յ՚ս ք՚ս զհոգիս իւր պայծառացուսցէ
և զաշխատանս իւր ի հաճոյս իւր ընկալցի ամէն

(Ոտանաւորի ճեղինակի գրչով—նoսրագիր B)

5 վրիպանաց սակս որ ի սմին և յայլսն՝ ներել ինձ մաղթեմ տրպիս։

(Նoսրագիր A.)

50. Առ կենսատու եւ արարչընկալ ս՚ք խաչն Աղթամարայ.

10 Գերահրաշ Տաճար լուսաճեմ խորան. յառագաստ[1] վերին գեղեցկահարմար. առ քեզ պաղատիմ ս՚ք խաչդ բարերար.

Արքայն արքայից առ քեզ բնակեցաւ. պսակեալ զքեզ բերկրեալ ցնծացաւ։

15 Գեղգեղեալ գովեմ զերդս զանազան. զկղզինն աղթմ՚ր իւր ս՚բովքն համայն. աստ կառուցանի ս՚ք խաչն պատուական. լիցի պահապան ազգիս արամեան։

Քումբէթդ երկակի է երկնանման. դրունքդ երբակի ըստ երրորդութ՚ն տեսոյդ զմայլին աշխարհքն
20 ամենայն։

Ազնիւ պատկերօք զքեզ զարդարեցին.
անուանդ կենսատու ս՚ք խաչ ձայնեցին.
կղզինն աղթամ՚ր զքեզ կառուցին.
յանդէպ վասպուրայ մեծի քաղաքին.
25 զի ես յառագաստ մաքուր փեսային.
ահագնատեսիլ տաճար երկնային։

---

[1] Թէ նախընթաց էջերում և թէ այստեղ բառասկզբին տեսնում ենք յաճախ, ձայնաւորով սկսուող բառերի մէջ, յ, որը որոշ բարբառների յատուկ մի հագագային շունչի փոխարէն է և ոչ յ նախդիրը. երբեմն յ-ի փոխարէն պատահում է նաև հ, օր. «պատուէլի հայրս (= այրս) այս ապրէլուսս». Ձեռ. Ագուլ. Թովմ. առ. վ. Թ. 17, էջ՝ 1. Թուակ. գրչթ. ՁՂՁ.